
ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ «ՄԱՄՆԱ ԾՈՒԵՐ» ԷՊՈՍՈՒՄ

ՏՈՆՈՅԱՆ Ս.Հ.

«Մասնա Ծոեր» էպոսը հայ ժողովրդի գոյափիլիսոփայության հանրագիտարանն է, նրա հազարամյա մշակույթի բարձրակետը, ոգու և աշխարհըմբռնման խտացումը, պատմության և ստեղծած հոգևոր արժեքների հանճարեղ համադրությունը:

Էպոսում հերոսների կյանքի և վախճանի միջոցով ասացողների կողմից առաջ են քաշվում և լուծվում վիթխարի ընդգրկման կրոնափիլիսոփայական և բարոյաէթիկական հարցեր, տրվում դրանց պատասխանները, որոնք գտնելու համար բարձրագույն ճշմարտություն փնտրող միջնադարյան իմաստունները դիմում էին անտիկ փիլիսոփայությանը, նորայլութագորականությանը, նորալատոնականությանը, փակ կամ հերմետիկ գիտելիքներին:

Անանուն բանաստեղծները գիտակցում են, որ Աստծո ձեռքին են մարդու կյանքը, ճակատագիրն ու վախճանը, որ տիեզերքի Տիրակալը և Արարիչը ամեն վայրկյան ներկա է մարդու կյանքում, ենթակա չէ մարդկային պատկերացումների կատեգորիաներին և դուրս է ժամանակից ու տարածությունից:

Շուրջ երեք հազար տարի առաջ Հին Բարայելում ծնված մենաստվածության գաղափարը դարձավ մարդկային մտքի բարձրագույն արտահայտությունը: Աստծո էության մասին հանճարեղ բանաձևումով է խոսում Մասնա դյուցազն Դավիթը. «Աստված էն է, ինչ որ մեզ ստեղծել է ու պահում է: Աստված բարերար է, ողորմած, օրհնյալ ու միշտ հիշյալ: Թագավոր, ինչ թագավոր, ապա մենք թագավոր Տեր Աստված գիտենք»¹: Կարելի է անվարան պնդել, որ այլաբանական խորհրդանշական աշխարհի ճանաչողությունը և խորհրդապատկերներով (էմբլեմաներով) ու խորհրդանիշներով հարուստ նրա մետաֆիզիկական մոդելի ստեղծումը մեծապես հաջողվել է մեր էպոսի անանուն բանաստեղծներին, և նրանց հանճարի շնորհիվ կամուրջ է գցվել երկրայինի և երկնայինի միջև:

«Մասնա Ծոեր» էպոսում քրիստոնեական առասպելաբանության տարրերը հանդես են գալիս ինքնուրույն կամ ստեղծում են գեղարվեստական ենթահամակարգ: Վիպասքում կրոնական շերտը զգալի չափով կրում է երկու մեսիական (փրկչական) կրոնների՝ քրիստոնեության և միթրայիզմի (Միհր աստծո պաշտամունքի) ազդեցությունը: Մեսիական գիտակցությունը ծնվել է տառապանքից, անարդարությունից և չարիքից:

Պատմությունը, որի մեջ հաղթում են դետերմինիզմը և ճակատագիրը, լցված է ազատության ներքին դիալեկտիկայով և արդարացվում է միայն մեսիական սպասումով, ոգու հաղթանակով ոչ միայն մարդկային, այլև

¹ Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, Ե., 1989, էջ 127:

տիեզերական կյանքում:

«Սասնա Ծռեր» վիպաքում Սասնա տան նախահայր ու հիմնադիր են Ասորեստանից (Միջագետքից) եկած եղբայրները՝ Սանասարը և Բաղդասարը²: Սանասարը լցված է աստվածային ծովի հզորությամբ, ամպրոպածին դուրսացն է և հրեղեն: Ժողովուրդը բնագործ և դարերի իմաստուն փորձով գիտեր, որ քաջ ու անվանի հերոսներին, որպես ընտրյալների, նույնիսկ անհնարին թվացող վիճակում օգնում էին տիեզերական վերին ուժերը: Սանասարի առջև ծովը ցամաքեց, ինչպես դա տեղի ունեցավ, երբ Սովսեսը, դուրս բերելով իր ժողովրդին եգիպտական գերությունից, անցնում էր Կարմիր ծովը: Էպոսի առաջին ճյուղում միախառնված են տոտեմականն ու դիցաբանականը, հեթանոսականն ու քրիստոնեականը: Ամբողջ ճյուղում պայքար է գնում քրիստոնյա Գագիկ թագավորի, նրա դուստր Օսվինար խանումի, վերջինիս որդիների և կռապաշտ խալիֆի ու նրա կուրքերի միջև: Ծովի հատակին Սանասարը տեսնում է մի եկեղեցի, ներս է մտնում ու քնում այնտեղ: Երազում նրան է հայտնվում Մարիամ Աստվածածինը.

Մայր Աստվածածին էկավ էրագ ասաց.

Հե՛յ, Սանասար, էլի վե՛ր:

Խաչ Պատերազմին կո էստեղ է.

Էլի, յոթ ծունր, աղոթք առջև արա.

Արժան ըլիս, քեզ կը հասնի,

Դնես վեր քո աջ թնին, որ դարբ չառնի՞³:

Ծովի հատակին հայտնվում են նաև հրեշտակներ: Հենց նրանք են հերոսին հանձնում Խաչ Պատերազմին՝ նրան դարձնելով անխոցելի ու անհաղթ: Սանասարին են հանձնվում նաև հրեղեն ձին՝ Քուռկիկ Ջալալին, Կեծական թուրք, իր հաղթության ասպազներ, որի հիմքում դրված է արժանի լինելու դեպքում Աստծո հովանավորությունն և պաշտպանությունը: «Սանասար և Բաղդասար» ճյուղում վիպական հերոսի կենսագրությունը ձևավորվում է վաղնջական ժամանակների դեպքերից, որոնք մնացել են ժողովրդի հիշողության մեջ: Այդ անունները, կերպարները, դեպքերը, ինչպես Հովսեփ Օրբելին է գրում. «Մեզնից բաժանված են ոչ թե մեկ, այլ բազմաթիվ հազարամյակներով»⁴:

Էպոսի առաջին ճյուղում ժողովրդի գիտակցության մեջ մեկընդմիջտ մերժվում է կռապաշտությունը: Վերջնական անցում է կատարվում տոտեմական-դիցաբանական-հեթանոսականից դեպի մենաստվածություն և քրիստոնեություն: Սասնա դուրսագունների ձեռքով կառուցվում է հայի

² Աստվածաշունչ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007, Տոբիթ, Ի:24, **Մովսես Խորենացի**, Պատմութիւն հայոց, Ե., 1991, էջ 111:

³ Սասունցի Դավիթ, էջ 105:

⁴ **Հ.Օրբելի**, Հայկական հերոսական էպոսը, Ե., 1956, էջ 133:

երագանքի երկիրը, որտեղ թագավորում են արդարության ու ճշմարտության օրենքները. եղբայրները հավատարիմ են Աստծուն, Նրա աշխարհակարգին ու օրենքներին և արժանիորեն կրում են իրենց հաղթության ասպագենը:

Վերջանում է Մասնա առաջին դրուցագուն Մանասարի ճյուղը: Բացվում է Մանասարի կրտսեր որդի Մեծ Մհերի ճյուղը: Դրուցագնական ուժը, հայրենասիրությունը, ազատասիրությունը Մեծ Մհերին բերում են անհաղթ հերոսի համբավ: Նա հաղթում է Մասունի թշնամի գոռոզ Մելիքին և նրան հարկադրում ճանաչել Հայաստանի անկախությունը և հայ ժողովրդի՝ ազատ ապրելու կամքը: Մհերը կառուցում է Մարութա Բանձրիկ Աստվածածին վանքը:

Սակայն «Մեծ Մհեր» ճյուղում Մհերը խոտորվում է ճշմարիտ ճանապարհից: Յոթ տարի Մըսըրում մնալուց և Իսմիլ խաթունին Մըսըրին ժառանգ պարգևելուց, Իսմիլի քաղաքական հեռահար նպատակներն ու նենգությունը հասկանալուց հետո միայն նա վերադառնում է Մասուն: Կինը՝ Արմաղանն ուխտ էր արել քառասուն տարի հեռու մնալ ամուսնուց: Վարդապետներն իրենք են նպաստում Արմաղանի «էթմնակոտոր» լինելուն և Աստծուն տված երդումը դժեղուն: Նրանք առաջնորդվում են քաղաքական և ազգային գերակա շահերով. Մհերից հետո Մասունը պետք է ունենար ժառանգ և պաշտպան: Ե՛վ Մհերը, և՛ Արմաղանը գիտակցում են, որ ուխտի խախտումը հղի է ծանր հետևանքներով, և իրենք պետք է կյանքով հատուցեն «էթմնակոտոր» լինելու համար: Ե՛վ, այնուամենայնիվ, գիտակցաբար գնում են այդ քայլին:

Այն, ինչ արդարացված էր հայրենասիրության և Մասնա տան շահերի տեսանկյունից, դեմ էր աստվածային բարոյականությանը և ճշմարտությանը:

Եկավ Դավթի ժամանակը: Քրիստոնեական բարոյականությունը և աշխարհայացքը Դավթի ճյուղում հասնում են իրենց բարձրակետին: Վեղաներից մյուս ժողովուրդներին անցած **Դավիթ** անունը նշանակում է **ամենագոր, աստվածային**: Փոքր հասակում Դավթին Մըսըր՝ Իսմիլ խաթունի մոտ ուղարկելը էպոսի ասացողների համար դարձել է բարին ու չարը, ազնվությունն ու նենգությունը, ազատությունն ու բռնությունը հակադրելու միջոց: Մեր ժողովրդի ամենասիրած հերոսին շատ են համեմատել բիբլիական Դավթի հետ: Նրանց երկուսին էլ հատուկ են բարձր հավատավորությունը և բարեպաշտությունը: Ե՛վ Մասունցի Դավիթը, և՛ բիբլիական Դավիթը աստվածային ծրագիրը կենսագործող, հայրենիքի թշնամուն հալածող ու հաղթող ընտրյալներ են:

Բազմաթիվ հետազոտողներ նշել են քրիստոնեական աշխարհայացքի և բարոյականության զգալի ազդեցությունը էպոսի վրա. Այս փաստը նշում է նաև մեծանուն հայագետ Մ. Աբեղյանը⁵:

Դավիթն ինքը երբեք չի հարձակվում, նա միայն պաշտպանում է իր հայրենիքը, քնած կամ ընկած թշնամուն չի հարվածում, առանձնահատուկ վերաբերմունք ունի գերիների, թույլերի, խեղճերի նկատմամբ, նույնիսկ

⁵ Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, Ե., 1966, էջ 420:

կապած ոչխարին չի խփում: Դավթին խորթ են չար մտքերն ու խորհուրդները: Բարությունը, գույնն ու կարեկցանքը Դավթի բնավորության ամենաբնորոշ գծերն են:

Կաթնաղբյուրի անմահական ջրով զորացած ազնիվ ու արդար հերոսի հետ են թե՛ յուրայինների և թե՛ թշնամիների օրհնանքը, Սասնա ժողովրդի անսահման սերը, նաև Աստծո սերն ու ողորմածությունը: Նա չի ուզում մտնել նույնիսկ իր թշնամիների երեխաների մեղքի տակ, մերժում է հորեղբոր կնոջ՝ Մառեի պիղծ ցանկությունները: Վճռական է և աներեր հայրենիքի թշնամիների, նրա ազատության և անկախության դեմ ոտնձգություն կատարողների, առանձնապես վանքը թալանողների և վանականների սպանողների նկատմամբ: Դավթի և Մելիքի հակադրությունն ու պայքարը բարու և չարի պատերազմն է, երբ չարը պարտվում է, և բարին՝ հաղթում, ինչպես բոլոր վիպական ստեղծագործություններում: Դավթը Մարութա Բանձրիկ Աստվածածին էկեղեցին նորոգում և դարձնում է հարուստ մի վանք: Հավատարմով աղոթքի ուժին՝ նա ժողովրդին խնդրում է վանքում աղոթել իր հաղթանակի համար, «հերահոտ հրողբերից» պահանջում է վարպետներին ու բանվորներին առատ վարձատրել: Նրա համար բարձրագույն արժեք է «հալալությունը» կամ արդարությունը, որը նա խնդրում է նույնիսկ Սասնա քարերից, աղբյուրներից, սարերից:

Սակայն Մեծ Մհերին պատուհասած մեղքից բաժին է հասնում նաև Սասունցի Դավթին: Դավթը նույնպես «էրթմնակոտոր» է լինում: Նա մատանի է փոխանակում Չմշկիկ Սուլթանի հետ, սակայն լքում է նրան ու ամուսնանում Խանդութի հետ: Չմշկիկ Սուլթանին երդվում է յոթ օրից հանդիպել և պարզել հարաբերությունները, սակայն խոստումը ձգվում է յոթ տարի, Դավթը երկար ժամանակով լքում է նաև հղի Խանդութին: Գալիս է ցասման ու հատուցման ժամանակը նաև Դավթի համար: Աստծո սահմանած օրենքների և կարգի դեմ մեղանչումն ու բարոյական նորմերի ոտնահարումը նույնպես չներկեցին նրան և դարձան կործանման ու մահվան պատճառ: Մերնդեսերունդ էկած և Սասնա Օտերին Աստծու հովանավորությունն ապահովող Խաչ Պատերազմին Դավթի թնին սևացավ, և ինչպես ինքն է ասում, ոչ թե իր որդի Մհերն էր իրեն խփում, այլ՝ Խաչ Պատերազմին: Դավթը սպանվեց Չմշկիկ Սուլթանի և իր ապօրինի դստեր ձեռքով:

Եկավ Փոքր Մհերի ժամանակը: Մհերը ծնվեց մի ձեռքը խուփ, և ձեռքի մեջ՝ մի պուտ արյուն: Քեռի Թորոսը (ըստ որոշ պատումների՝ Դավթը) եկավ Կապուտկող, «մաժեց» փոքրիկի ձեռքը, մատները բացվեցին, տեսան «կաթ մի արյուն ձեռքի մեջ»:

Ո՞վ է Փոքր Մհերը՝ աշխարհը մի կաթ արյուն դարձրած Սասնա դյուցազունը՝ առեղծվածային, հակասական, ողբերգական ու քննության համար չափազանց բարդ: Այն հերոսը, որին հողը չի կարող պահել: Մհերի թեոգոնիկ ծագման արմատները թաղված են վեդայական-իրանական-հայկական առասպելաբանության մեջ: Վեդայական և զրադաշտական Միթրա աստվածը հայերի մեջ կոչվում էր Միհր: Ավեստայում Միթրան չար ու կործանիչ Ահրիմանի թշնամին է, աստվածների հոր՝ Ահուրամազդայի կամ

Արամազդի որդին: Միթրան պաշտվել է ամբողջ անտիկ աշխարհում. նա մարդկանց համար անպարտելի արև-աստվածն է, որի խորհրդանիշ կրակը վառվում է տաճարների ատրուշաններում՝ որպես արդարության, ճշմարտության, ուխտի և հավատարմության խորհրդանիշ: Միթրան աստված է, որն անխնա պատժում է կեղծիքն ու խաբեությունը: Միթրան թե՛ Վեդաներում, և թե՛ Ավեստայում լուսավոր և բարի աստված է, լույս և կրակ: Նա ամենատես է և ամենագոր, մարդկանց չարիքից ազատող, բարիք, իմաստություն ու երջանկություն պարգևող: Նա լույս է և լույսի պես ամեն տեղ մտնում է, ամենատես է և ամենալուր: Միհրը սիրելի աստված էր նաև հայերի համար:

«Մասնա Ծոեր» էպոսում, սակայն, տեղի ունեցավ Միհրի փոխակերպումը, մետամորֆոզը՝ կապված աստվածների նորոգման հետ: Երկու բարի և լուսավոր մեսիական կրոններից հաղթեց քրիստոնեությունը, երկու բարի և լուսավոր աստվածներից՝ Քրիստոսը: Քրիստոնեությունը և միթրայիզմը դարձան իրարամերժ, թշնամի կրոններ և, բնականաբար, տեղի ունեցավ Միհրի չարափոխումը: Փոքր Միհրը քրիստոնեական սիրո և ինքնագոհաբերման Աստծո հակապատկերն է: Համաշխարհային ներդաշնակության աստվածային տիրույթում տեղ չկա եսին, եսակենտրոնությանը, հպարտությանը կամ գոռոգությանը, նախանձին, բարոյականության աստվածային չափանիշների ոտնահարմանը: Քրիստոնեությունը ամենից առաջ կարևորում է հեզությունը և խոնարհությունը: Միհրի մեջ առկա են մարդկային բնածին արատավորությունը, հակումը մեղքի նկատմամբ նաև անհեթեթ դաժանությունը: Ազատությունը վերածվում է ամենաթողության: Ի տարբերություն Մասնա մյուս դիուցագուհիների՝ Միհրի ուժը մութ է, իռացիոնալ ու չար:

Էպոսում բախման մեջ են գտնվում հեթանոսական և քրիստոնեական կրոնական գիտակցությունները: Թե՛ Թովմա Աքվինացին, և թե՛ Ռուսոն մարդու բնությունը համարում էին բարի՝ գտնելով, սակայն, որ մարդուն խանգարում են բնական իրավունքի կամքը, բանականությունը: Դասական կալվինիզմը մարդուն նսեմացնում է, Նիցշեն ժխտում և ոչնչացնում է մարդուն, կորցնում նրան գերմարդու մեջ: Մարքսը մարդուն կորցնում է հասարակության և սոցիալական կոլեկտիվի մեջ: Ե՛վ Մարքսը և Նիցշեն տարբեր ուղղություններով ժխտում են մարդուն և քրիստոնեական բարոյականությունը: Դոստոևսկին քննարկում է Աստված-մարդ և մարդ-Աստված դիալեկտիկական՝ հռչակելով, որ մարդը չպետք է թույլ տա իր կյանքի և արժանապատվության ոտնահարում, բռնություն և անարգանք: Այս աշխարհը մարդկայնության, հոգևորության, գեղեցկության և անմահության աշխարհը չէ: Այն վախի, տառապանքի, չարիքի և ատելության աշխարհ է: Եթե մարդու կյանքում բացակայում է Աստված՝ որպես ճշմարտություն, Ազատություն և Բմաստ, ամեն ինչ դառնում է անիմաստ և պատահական: Միհրի ողբերգությունը ազատության, դետերմինիզմի և շնորհի դիալեկտիկական է, որը նրա պարագայում կլուծվի դրախտի և դժոխքի սահմաններից դուրս: Քրիստոնեական հոգևորության մեջ հաստատվում են

մարդու, անգամ մարդկանցից ամենահեղինի աստվածակերպ էությունը, մարդու անկրկնելի և եզակի արժեքը. «Ձեր գլխի բոլոր մազերն իսկ հաշվված են»⁶, - հոչակեց Հիսուսը: Իր «Լերան քարոզով» Նա աշխարհ բերեց մարդկության կողմից երբևէ ստեղծված ամենաբարդ և կատարյալ իմաստաբանական և կրոնաէթիկական համակարգը: Քրիստոնեական հոգևորությունը ազատությունը դարձնում է լուսավոր, ի հայտ բերում սերը, բարությունը, կարեկցանքը, նույնիսկ թշնամու հանդեպ բոլոր այն որակները, որոնք բացակայում են Փոքր Միերի մեջ: Ձուրկ գութից ու կարեկցանքից՝ Միերը դառնում է խաղալիք մութ և իռացիոնալ ուժերի ձեռքին, իրեն ենթարկում ճակատագրի իշխանությանը: Այս հարցին մասնավորապես անդրադարձել է Մ.Աբեղյանը⁷:

Փոքր Միերը ելնում է նույնիսկ իր հոր՝ Դավթի դեմ՝ նախանձի և եսամոլության շարժառիթով: Ոսնահարվում են բարոյականության բոլոր նորմերը հատկապես այն ժամանակ, երբ առճակատվում և մենամարտում են հայր ու որդի: Դժբախտ Խանդուղը ոչ մի կերպ չի կարողանում իրարից բաժանել արնաթաթախ ամուսնուն և որդուն: Դաժան կովում ոչ մեկը Խանդուղին չի լսում, և նա Աստծուն խնդրում է ուղարկել Գաբրիել հրեշտակին, որ գա և իրարից բաժանի հորն ու որդուն: Աստված անողոր է և չի ներում հատկապես ծնողների ու զավակների աստելությունն ու թշնամանքը:

Չար կրքերը և չար խորհուրդներն են Միերի ուղեկիցները: Մարդուն տրված իրավունքը՝ ընտրել բարու և չարի միջև, սանձել կրքերը և դրանք սուբլիմացիա անել աստվածայինի միջոցով, երկրի վրա իրականացնել աստվածային նպատակները, չի կատարվում: Միերը սպանում է թշնամի քաղաքի վերջին կատվին անգամ, դաժանաբար սպանում խլաթցի պառավին՝ թշնամի քաղաքի ծուխը վառ պահելու ցանկության համար: Միերի դատաստանն անողոր է ու անմարդկային: Միերն իր բարի, կարեկից, մեծահոգի ու մարդասեր հոր հակապատկերն է: Կարծես հենց նրա մասին է գրված Աստվածաշնչում. «...նա, ով չի նորոգում և բարձրացնում նախնիների առաքինությունը, նա անոթ և նախաստինք է իր պապերի համար և մի նոր անեծք»⁸:

Էպոսում առանձնահատուկ տեղ է տրվում եկեղեցու սպասավորների և Փոքր Միերի փոխհարաբերություններին: Միերն սպանում է Մատդավանքի դավաճան վարդապետին: Քրիստոնեական աստվածաբանության ու կաթոլիկ եկեղեցու հայր Օգոստինոս Երանելին աստվածաբանորեն հիմնավորեց եկեղեցու՝ որպես պետական իշխանության կենտրոնի հասարակական դերը: Իր «Աստծո քաղաքի մասին» աշխատությունում նա գրում է. «Եկեղեցու

⁶ Աստուածաշունչ, Մատթ., 10:28-33:

⁷ Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 524: Այս մասին տե՛ս նաև Եղիազարյան Ա., «Սասնա ծռեր» էպոսի պոետիկան, Ե., 2013, էջ 222:

⁸ Աստվածաշունչ, Միքայ, 20:28:

պատմությունն աշխարհում Աստծո զարգացումն է»⁹: Միջնադարում ամբողջ աշխարհում, նաև Հայաստանում տիրում էր եկեղեցուց և նրա ներկայացուցիչներից վախի ու կախվածության մթնոլորտ: Հանուն ճշմարտության պետք է ասել, որ հայ եկեղեցու՝ շնորհով լցված սպասավորների և քահանաների կողքին գտնվեցին, ինչպես Նարեկացին կասեր՝ «անկնդրուկ քահանաներ»՝ հեռու հոգևորությունից և նյութապաշտ: Այդպիսի քահանաներից մեկը հայտնվեց Փոքր Միերի ճանապարհին, և Միերը դաժան դատաստան տեսավ նրա հետ՝ դատաստանի իրավունքը վերապահելով իրեն:

Էպոսում առաջ է քաշվում նաև աշխարհի կործանման թեման: Զարհուրելով Միերի իռացիոնալ և դիվային ուժից՝ Դավիթը վախենում է աշխարհի համար: Դավիթն անիծում է Միերին՝ ցանկանալով նրան՝ անժառանգություն և անմահություն: Երկու ծանրագույն պատիժ, որ կարող է ընդհանրապես վիճակվել որևէ մահկանացուի: Նա որդուն՝ Միերին անվանում է Ծանմախ Կայեն¹⁰:

Փոքր Միերի կերպարի մեջ առկա է մի շատ կարևոր դրվագ: Միերը կոտորում է բոլոր վիշապներին և հաղթում դրանցից ամենաուժեղին: Հաղթելով վերջին վիշապին՝ նա դառնում է աշխարհի տիրակալը: Հենց այդ ժամանակ նրան մոտենում է սատանան և համոզում նվաճել նաև երկինքը, Միերը էլնում է Աստծո դեմ: Աստծո ուղարկած հրեշտակը պարտության է մատնում նրան:

Միերը գրկված է գերեզմանի իրավունքից, նա անմահ է, միայնակ, և հիշեցնում է թափառական հրեայի անմահությունը. «Եթե մեկը մեղք գործի մարդու նկատմամբ, Աստված կկտրի նրա դատաստանը, սակայն եթե Աստծո դեմ մեղանչի, ո՞վ կաղաչի նրա համար»¹¹, - ասում էր Սողոմոն իմաստունը:

Այնուամենայնիվ, Միերը երեք օր շարունակ դառնորեն ողբում է իր հոր սպանության լուրը լսելիս, ողբում իր որբությունը՝ անչափ հուզիչ ու ամփոսանքի բառերով: XX դ. մեծագույն հոգեվերլուծաբան Զիգմունդ Ֆրոյդը «Տոտեմ և տաբու» աշխատությունում մի հետաքրքիր դիտարկում ունի. «Այն բանից հետո, երբ որդիները բավարարում են իրենց աստեությունը հոր նկատմամբ՝ հեռացնելով նրան, սկսում է հաստատվել ավելի վաղ ճնշված քնքշությունը նրա նկատմամբ. այն ի հայտ է գալիս խղճի խայթի ձևով, որի հետ կապված առաջանում է մեղքի զգացում: Մեռյալը դառնում է ողջից ավելի ուժեղ»¹²:

Էպոսի վերջին ճյուղում վերջնականապես խախտվում է Աստված-մարդ կապը: Միերը առնում է հոր արյան վրեժը, նա շրջում է երկրից երկիր, Մասնատան բոլոր մեռյալների հիշատակին պատարագ է տալիս, այցելում Բաղդասարի, ապա՝ իր ծնողների գերեզմանին, դառնորեն ողբում իր կարոտը և

⁹ Блаженный Августин. О божьем граде, М., 1994, с. 108.

¹⁰ Տե՛ս Մասնա ծոեր, Ե., 1936, էջ 522:

¹¹ Աստվածաշունչ, Ա թագ., 2:22:

¹² Фрейд З. Тотем и табу, М., 1995, с. 204.

որբությունը: Սակայն Մհերի ողբերգությունը Հոբի, Էդիպի, Սոկրատեսի, առավել ևս Հիսուսի ողբերգությունը չէ, արդարի և անարատի ողբերգությունը չէ: Նրա կողմից ոտնահարված են աստվածային ճշմարտության չափանիշները: Մհերի մեղքերը պատնեշ են դարձել իր և Աստծո միջև:

Բոլոր կրոնները ստեղծվել են մահվան նկատմամբ վերաբերմունքի հիման վրա: Մահը ամենացնցող երևույթն է՝ կապված տրանսցենդենտի հետ, ամենամեծ չարիքը, որն ամենից շատ է սարսափեցնում մարդկանց: Մհերի անմահությունն այդ անմահությունը չէ, քանի որ նա զրկված է մահվան միջոցով հավերժություն մտնելու հնարավորությունից: Մհերը չունի մահվան միջոցով հավերժություն մտնելու, Հիսուսի երկրորդ գալստյան ժամանակ փրկվելու և հարություն առնելու հնարավորություն, քանի որ գտնվում է տարբեր աշխարհների սահմանագծին, նա ամբողջապես այս աշխարհում չէ, իսկ անմահության մետաֆիզիկական խնդիրը առավելապես կապված է ժամանակի խնդրի հետ, որը Փոքր Մհերի համար ունի բոլորովին այլ չափումներ:

Առաջին մարդու՝ Ադամի մեջ չբացահայտվեց հոգևոր մարդը. նա գնաց ազատության փորձության ճանապարհով և ժառանգեց մեղքն ու մահը: Մհերը նույնպես գնաց ազատության փորձության ճանապարհով և ժառանգեց մեղքն ու անմահությունը՝ որպես նզովք ու պատիժ: «Աստծու ծանր ձեռքը իջավ Մհերի վրա, Աստված պատժեց նրան՝ իբրև Աստծո դեմ մարտնչողի, Աստծո դրած բնական և հասարակական օրենքների դեմ գնացողի՝ իբրև չար, կործանիչ ոգու, դևի, Նեռի (Անտրիխրիստոս)», - գրում է Ավ. Բասահայանը¹³:

Աշխարհը երբեք է Մհերի ձիու ոտքերի տակ: Հողը նրան տեղ չի տալիս: Երականանում են Քեռի Թորոսի և հոր՝ Մասունցի Դավթի մարգարեությունները: Մհերին տեղ է տալիս միայն քարը, կրակապաշտության խորհրդանիշ թռչունի՝ Ագռավու քարը:

«Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և Կյանքը», - ասում է Հիսուսը¹⁴: Ժամանակի և պատմության հրամայականով քրիստոնեությունը հաղթեց՝ բարձրանալով միթրայիզմի ավերակների վրա: Նա աշխարհ բերեց գաղափարներ և խորհրդանիշներ, որոնց միջոցով մարդը, սրբված իր ադամական մեղքից, վերահաստատեց կապը Աստծու հետ: Խաչը դարձավ այն հզոր զենքը, որով քրիստոնեությունը հաղթեց և բարձրացավ՝ աշխարհ բերելով հարության, փրկության և դրախտի հույսը: Հիսուսից առաջ դրախտն անբնակ էր: Տեղի ունեցավ աշխարհի և տիեզերքի քրիստոնեացում: Գողգոթայում Հիսուսի թափած արյունը և խաչելությունը դարձան փրկության ճանապարհ:

Մհերն իր հավատարիմ, հրեղեն ձիու՝ Քուռկիկ Ջալալու հետ փակված է Ագռավաքարում: Քարայր մտած հովվի հարցին, թե երբ դուրս կգա, նա պատասխանում է.

¹³ Ավ. Բասահայան, Երկերի ժողովածու, Ե., 1977, էջ 159:

¹⁴ Աստուածաշունչ, Հովհ., 14:6:

Քանի աշխարք չար է,
 Հողն էլ դալբցեր է,
 Մեջ աշխարքին ես չեմ մնա:
 Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,
 Երբոր ցորեն էղավ քանց մասուր մի,
 Ու գարին էղավ քանց ընկուզ մի,
 Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էղտեղեն:

Այստեղ բացահայտ խոսվում է Հիսուսի երկրորդ գալստյան մասին, աշխարհի փոխակերպության և պայծառակերպության մասին: Սակայն անմահությանը պատժված Միերն իրավունք կունենա՝ դուրս գալ քարայրից և կանգնել Հիսուսի աստանի առջև: Ցորենի և գարու մասին Միերի խոսքերն ունեն առեղծվածային և խորհրդավոր իմաստ: Գուցե սա մարդու՝ երկիր արտաքսվելուց առաջ կորուսյալ դրախտի հիշողությունն է և նորից այնտեղ վերադառնալու անմեռ հույսը, Աստծո արքայության, Համաշխարհային ներդաշնակության երազանքի հույսը: Գուցե Միերը լավ գիտեր նաև, որ միթրայիզմն անվերադաճ պարտվել է, և ինքն այլևս դուրս գալու հնարավորություն չունի:

Ինչո՞ւ, այնուամենայնիվ, Միերի կերպարը երկատվեց, և մեր ժողովուրդը նրա մեջ տեսավ նաև լուսավոր գծեր: Ինչո՞ւ Միերը, փակվելով քարայրում, հայ ժողովրդին թողեց այդ խորհրդավոր ու առեղծվածային բառերը: Սա վկայում է այն մասին, որ մեր ժողովուրդը Փոքր Միերին վերաբերվում է որպես չարի ու բարու համադրության: Գուցե մեր ռամիկ ասացողները կանխագգում էին այն արհավիրքն ու աղետը, որ պետք է պատուհասեր Մասունին և ողջ հայ ժողովրդին: Մարել է Ջոջանց տունը, քարայր մտած հայ դուռագուներ չի կարող դուրս գալ և փրկել իր ժողովրդին, որովհետև ընկուզաչափ գարու և մասուրաչափ ցորենի ժամանակները, հայտնի չէ, թե երբ կգան, կամ կգան արդյոք: XX դ. նշանավոր փիլիսոփա- հասարակագետ Մաքս Վեբերը հրաշալի է բնութագրում աշխարհի վիճակը. «Աշխարհը՝ որպես անկատարության, անարդարության, տառապանքի, մեղքի, վաղանցիկության կիզակետ՝ ծանրաբեռնված մեղքով, իր զարգացմամբ ու մշակույթի տարբերակվածությամբ գնալով ավելի անիմաստ կերպարանք ընդունող, բարոյագիտական տեսանկյունից պետք է կրոնին ներկայանար որպես աստվածային իմաստից և արժեքից լիովին զրկված իրականություն»¹⁵:

Փոքր Միերի նման ամբողջ Մասունն է հայտնվել շվար ու մոլոր որբի վիճակում, Մասնա Ծոերից ոչ մեկը չկա, չկան քեռի Թորոսն ու Ձենով Հովանը: Մարել է Մասնա տան ճրագը. առջևում մոնղոլների և թուրքերի ժամանակներն են: Հայ ժողովրդին մնացել է միայն անարդար և չար աշխարհի կործանման հույսը:

¹⁵ Вебер М. Мотивы социального действия, М., 1980, с. 64.

ПОБЕДА ХРИСТИАНСТВА В ЭПОСЕ “ДАВИД САСУНСКИЙ”

ТОНОЯН С.О.

Резюме

В армянском эпосе "Давид Сасунский" ("Сасна Црер") рассматриваются теологические, морально-религиозные и морально-философские вопросы, на которые даются ответы в рамках христианского мировоззрения и морали. В эпосе отражены две религии, борьба христианства с митроизмом, в которой победило христианство. Давид Сасунский – носитель христианской морали. Христианская религия дала миру идеи и символы, посредством которых человек получил надежду на воскресение и спасение. Евангельская идеология стала самой сложной и самой совершенной религиозной системой. Последний из сасунских храбрецов – Мгер Младший выбрал путь свободы. Свобода стала для него вседозволенностью, что нарушало заветы Бога и нравственные постулаты. В наказание Мгер был обречен на бессмертие и навеки заточен в пещеру.

THE TRIUMPH OF CHRISTIANITY IN THE EPIC “THE DAREDEVILS OF SASSOUN”

S. TONOYAN

Abstract

The epic "The Daredevils of Sassoun" is considered the Bible of Armenians. The epic considers theological, religious, and philosophical questions and addresses them from the perspective of Christianity. The epic reflects the fight between Christianity and Mithraism and highlights the victory of Christianity. David of Sassoun is the bearer of Christian morals, spirit, and essence. Through Christianity people received hope of resurrection and salvation.

Young Meher, the last of the daredevils of Sassoun chose freedom, through which he could breach God's behest and moral postulates. For this, he was punished by immortality and confinement in "Agravaqar".